

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԵԼԵՆԱ ՇԱՀԵՆԻ ՀԱՅՐԻԿՑԱՆ**

**ԳԱԲՐԻԵԼ ԳԱՐՄԻԱ ՄԱՐԿԵՍԻ ԵՐԿԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
(ԲՆԱԳՐԻ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆ ՈՒ ԱՆԳԼԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ)**

Ժ.02.02 - «Շնորհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2016**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր

**Վ. Գ. Համբարձումյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր

**Լ. Մ. Հովսեփյան**

բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ

**Տ. Բ. Միքայելյան**

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հ. Թումանյանի անվան  
պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի հոկտեմբերի 3-ին, ժամը՝ 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում

Հասցեն՝ 0015, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2016 թ. հուլիսի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ **Ն.Մ. Միմոնյան**

## ԱՏԵՆԱՌՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Առաջին անգամ կատարվել է Գ. Գ. Մարկեսի երկերի հայերեն թարգմանությունների հնարավորինս լիակատար վերլուծություն, անդրադարձ է կատարվել ոչ միայն բառակազմական և քերականական իրողությունների քննությանը, այլև ուսումնասիրվել են լեզվամտածողական առանձնահատկությունները՝ բնագրի, միջնորդ թարգմանությունների և հայերեն թարգմանությունների համեմատությամբ: Փորձ է արվել պարզել փոխաբերությունների, գրական և խոսակցական բառերի, բարդությունների, ինչպես նաև դարձվածային միավորների կիրառության առանձնահատկությունները և նրանց համարժեքության աստիճանը բնագրի և ռուսերեն ու անգլերեն թարգմանությունների համապատասխան ձևերի համեմատությամբ: Վեր է հանվել միջնորդ թարգմանությունների ազդեցությունը հայերեն թարգմանությունների վրա, ներկայացվել են հայերեն թարգմանություններում արտահայտված տարբերությունները բնագրի համեմատ: Հետազոտության նորույթն է նաև այն, որ անդրադարձ է կատարվել մի շարք թարգմանական միջոցների քննությանը Գ. Գ. Մարկեսի երկերի հայերեն թարգմանություններում, ներկայացվել են նրանց դերն ու կիրառությունը, գործադրման նպատակահարմարությունը և նշանակությունը:

**ԱՏԵՆԱՌՍՈՒԹՅԱՆ ՆՊՍՏԱԿՆ ՈՒ ԽՂԻՐՆԵՐԸ:** Հետազոտության հիմնական նպատակն է բնութագրել Գ. Գ. Մարկեսի երկերի հայերեն թարգմանությունների լեզվական առանձնահատկությունները, վերհանել լեզվամտածողական, բառակազմական, քերականական, դարձվածային միավորների և թարգմանական տարբեր միջոցների կիրառության նպատակահարմարությունը, դրանց ունեցած նշանակությունը հայերեն թարգմանություններում՝ միջնորդավորված թարգմանությունների և բնագրի համեմատ: Անդրադարձ է կատարվել բուն թարգմանական խնդիրներին՝ շեշտը դնելով Մարկեսի երկերի իսպաներեն բնագրի, ռուսերեն, անգլերեն ու հայերեն թարգմանությունների համարժեքության վրա: Այս նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել և քննվել են հետևյալ խնդիրները.

1. Քննել Գ. Գ. Մարկեսի հայերեն թարգմանությունների լեզուն՝ իբրև Մարկեսի երկերի լեզվական առանձնահատկությունների յուրացման և հայերենացման գործընթաց:
2. Վերհանել լատինաամերիկյան լեզվամտածողությանը հատուկ արտահայտությունների և միջոցների հայերեն թարգմանությունների համարժեք ձևերը՝ անդրադառնալով նաև հայ թարգմանիչների ցուցաբերած նախասիրություններին:
3. Բացահայտել բնագրային լեզվի, ոճի, բառակազմական և դարձվածային որոշ միավորների թարգմանական առանձնահատկությունները՝ լրիվ և մասնակի համարժեքության գործոնի հիման վրա:

4. Վերլուծել թարգմանական միջոցների կիրառությունները Մարկեսի երկերի հայերեն թարգմանություններում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ:**

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած է զուգադրական լեզվաբանության ժամանակակից փորձը: Ուսումնասիրությունը կատարվել է համաժամանակյա մոտեցմամբ, կառուցվածքային վերլուծության մեթոդով: Կիրառվել են համեմատական քննության և զուգադրության սկզբունքները:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՑԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Սույն գիտական հետազոտությունն իր տեսական և գործնական հատվածներով կնպաստի լեզվաբանության, ինչպես նաև թարգմանաբանության ոլորտներում Մարկեսի երկերի հայերեն թարգմանությունների հետագա վերլուծությանը: Բացի այդ, հետազոտության մեջ արծարծված խնդիրները և զուգադրական վերլուծությունների արդյունքները կարող են օգտակար լինել բանասիրության և թարգմանության ոլորտի մասնագետներին, կարող են կիրառվել լեզվամշակութային այլ բնագավառներում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնում: Թեմայի հիմնադրություններն արտացոլված են գիտական տարբեր հանդեսներում հեղինակի տպագրած հինգ հոդվածներում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:**

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է հետազոտության ներքին տրամաբանությամբ: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

**Ներածության** մեջ անդրադարձ է կատարվել ժամանակակից լեզվաբանության մեջ թարգմանության առավել տարածում ունեցող սահմանումներին, տեքստի թարգմանելիության հնարավոր կամ անհնարին լինելու վերաբերյալ լեզվաբանական տարբեր տեսակետներին, շեշտվել է թարգմանության մեջ համարժեքության կարևորությունը՝ հիմնավորելով թեմայի արդիականությունը և տեսական ու գործնական արժեքը, նշվել են հետազոտվող երկերի ցանկը, ինչպես նաև հարակից այլ հարցեր:

Ատենախոսության **առաջին՝ «Մարկեսի երկերի հայերեն թարգմանությունների ընդհանուր բնութագիրը»**, գլխում փորձ է արվել բացահայտել երկու և ավելի լեզուների լեզվամտածողական կապը, լեզվամշակութային տարբերությունների ազդեցությունը թարգմանության որակի վրա, քանզի *թարգմանության մեջ բախվում են տարբեր մշակույթներ, տարբեր անհատներ, տարբեր լեզվամտածողական համակարգեր*,

տարբեր գրականություններ, տարբեր դարաշրջաններ և զարգացման աստիճաններ, տարբեր ավանդույթներ և այլն<sup>1</sup>:

Ներկայացվել է լատինաամերիկյան լեզվամտածողության տարբերի որոշակի փոխակերպումն ու վերաարժևորումը հայկական միջավայրում: Լեզվամտածողական տարբերի թարգմանական առանձնահատկություններ հանդիպում են փոխաբերություն պարունակող արտահայտությունների թարգմանության ժամանակ:

Օրինակ իսպ. *Se levantaba con los primeros gallos*<sup>2</sup> ~ անգլ. *He rose with the crack of dawn*<sup>3</sup> ~ Նա վեր էր կենում ձեզը-ձեզին<sup>4</sup>: Իսպաներենից նշված բառակապակցությունը՝ *los primeros gallos*, թարգմանաբար նշանակում է՝ *սուաջին արադադների հետ*: Անգլերեն թարգմանությունը բացատրական բնույթի է և իմաստն արտահայտում է պարզ բառերի համադրությամբ՝ *արշալույսի «ձեղքով»*: Այս օրինակում առկա է միջնորդ թարգմանության ազդեցությունը՝ անգլերենից *ձեղքել*, հայերենում՝ *ծազել*: Տվյալ դեպքում միջնորդավորվածությունը բացասաբար չի ազդել թարգմանության որակի վրա:

Լեզվամտածողական առանձնահատկությունները թարգմանության մեջ հաճախ դրսևորվել են լեզվական միավորի հավելմամբ: Օրինակ՝ իսպ. *...se convirtió en un hombre de aspecto holgazán, descuidado en el vestir, con una barba salvaje que Úrsula lograba cuadrar a duras penas con un cuchillo de cocina* (-)<sup>5</sup> ~ ռուս. *...превратился в, казалось бы, никчемного, неряшливого человека с лохматой бородой, которую Урсула, прилагая немалые усилия, подрезала кухонным ножом* (-)<sup>6</sup> ~ *...սարդամեջ էր դուրս գալիս կեղտոտ շորերով և խառնափնթոր մորուքով...*<sup>7</sup> (//ՆՏՄ// էջ 6) .... *Սարդամեջ դուրս գալ* արտահայտությունը հայերենում ունի *հանրությանը ներկայանալ* իմաստը: Այն հիմնականում օգտագործվում է խոսակցական բառապաշարում և դրա հավելումը թարգմանության մեջ նպատակ է ունեցել տեքստը մոտեցնելու հայ ընթերցողի լեզվամտածողությանը:

<sup>1</sup> Տե՛ս *В. Н. Комиссаров*, Современное переводоведение, издательство “ЭТС” Москва, 2002, էջ 11.

<sup>2</sup> *G. G. Márquez*, El Amor en los Tiempos del Cólera, Nueva York, 1996, p. 18.

<sup>3</sup> *G. G. Márquez*, Love in the Time of Cholera (tr. by Alfred Knopf), New York, 1988, p. 5.

<sup>4</sup> *Գ. Գ. Մարկեզ*, Մերը ինչ էր այի ժամանակ (թարգմ. Ա. Քլջյան), Ե., Նոյյան Տապան, 2004, էջ 10, (այսուհետև շարադրանքին կից տալու ենք միայն բնագրի էջերը. նույնը նաև անգլերենի և իսպաներենի դեպքում):

<sup>5</sup> *G. G. Márquez*, Cien años de soledad, <http://www.uaca.ac.cr/bv/ebooks/novela/3.pdf>, p. 6.

<sup>6</sup> *Г. Г. Маркес*, Сто лет одиночество, [http://www.loveread.ec/read\\_book.php?id=18368&p=1](http://www.loveread.ec/read_book.php?id=18368&p=1), с. 3.

<sup>7</sup> *Գ. Գ. Մարկեզ*, Շարյուր տարվամենություն (թարգմ. Ռ. Հովսեփյան), Ե., Սովետական գրող, 1987, էջ 6, (այսուհետև շարադրանքին կից տալու ենք միայն բնագրի էջերը. նույնը նաև ռուսերենի և իսպաներենի դեպքում):

Երբեմն հավելումը թարգմանության մեջ անտեղի է և նույնիսկ աղավաղում է բնագրի իմաստը: Օրինակ՝ իսպ.՝ *Fue así como los niños terminaron por aprender que en el extremo meridional del África había hombres tan inteligentes y pacíficos que su único entretenimiento era sentarse a pensar...* (p. 8) ~ ռուս.՝ *Таким образом дети узнали, что на южной оконечности Африки живут миролюбивые и радушные люди, единственное занятие которых - сидеть и предаваться думам...*(с. 4) ~ Սիա այս կերպ երեխաները սերտեցին, որ Աֆրիկայի հարավային ծայրամասում բնակվում են խելացի, խաղաղասեր մարդիկ, որոնք բանուզործ չունեն, նստում, մտածում են միայն... (//ՆՏՍ// էջ 19): *Բանուզործ չունենալ* հավելումը հայերեն թարգմանության մեջ նպատակային չէ: Տվյալ դեպքում իսխսովել է բնագրային դրական վերաբերմունքն «այդ մարդկանց» նկատմամբ: *Բանուզործ չունենալ* արտահայտությունն ունի ոչ դրական երանգ, որը չկա բնագրում: Կարելի էր թարգմանել՝ *որոնց միակ զբաղմունքը նստել-մտածելն է:*

Տարբեր մշակույթներ կրող ազգերի լեզվական միավորների թարգմանություններում բառային այս կամ այն իմաստը կարող է ունենալ հարանշանակային տարբեր դրսևորումներ: Օրինակ՝ իսպ.՝ *...había consumido por orden de aparición* (p. 106) ~ անգլ.՝ *...he had devoured, in order of their appearance* (p. 58) ~ *...խժռում էր երբ և ինչ ձեռքն ընկներ...* (//ՍԽԾ// էջ 76): Հայերեն թարգմանության մեջ փոխանցվել է անզերեհում առկա հարանշանակային երանգը, քանզի բնագրում այն արտահայտված չէ նման կոպտությամբ:

Ատենախոսության երկրորդ «Թարգմանական համարժեքությունը Գ. Գ. Մարկեսի երկերի հայերեն թարգմանություններում», գլխում գուգադրության սկզբունքով ներկայացվել է բառակազմական իրողությունների թարգմանության վերլուծությունը առանձին օրինակների հիման վրա: Վերլուծությունները կատարվել են ըստ տիպական օրինակների՝ բնագրի և թարգմանությունների համեմատության հիման վրա՝ ըստ դրանց լրիվ կամ մասնակի համարժեքության:

«Տարբեր լեզուներում բառային միավորների՝ իրենց ողջ իմաստային ծավալով լրիվ համընկման դեպքեր հազվադեպ են պատահում: Որպես կանոն՝ դրանք մենիմաստ բառերն են, միավորներ, որոնք երկու լեզվում էլ ունեն մինևույն բառային իմաստը»<sup>8</sup>: Լրիվ համարժեքության օրինակ են հատուկ և աշխարհագրական անունները, օրինակ՝ իսպ.՝ *Me acordé de Rosa Cabarcas...* (p. 5) ~ ռուս.՝ *Я вспомнил про Розу Кабаркас...* (с. 1) ~ *Հիշեցի ժամադրությունների ընդհատակյա տան տիրուհի Ռոսա Կարարկասին...* (//ՎՏՈ// էջ 3): Սա լրիվ համարժեքության օրինակ է, որտեղ *Rosa* անունն իսպաներենից ռուսերեն թարգմանվել է պատճենման միջոցով՝ *Poca*, հայերենում էլ՝ ռուսերենից՝ *Ռոսա*, այն դեպքում, երբ ռուսերենում և հայերենում կարելի էր կիրառել տվյալ անվան՝ սեփական լեզվում եղած տարբերակը՝ ռուսերենում՝ *Poca*, հայերենում՝ *Ռոզա*:

Աշխարհագրական անունների թարգմանությունը ևս լրիվ համարժեքություն է, օրինակ՝ իսպ.՝ *Macondo era entonces una aldea de veinte casas...* (p. 3) ~ ռուս.՝

<sup>8</sup> Л. С. Бархударов, Языки перевод, М., 1975, с. 74:

*Макондо* был тогда небольшим поселком из двадцати глинобитных, с камышовыми кровлями домишек... (с. 1) ~ *Բամբուկից ու կավից շինված մի երկու տասնյակ խրճիթներով փոքրիկ ավան էր այդ տարիների Մակոնդոն...* (//ՇՏՄ// էջ 3): Մակոնդո քաղաքը Մարկեսի «Հարյուր տարվա մենություն» ստեղծագործության մեջ մտացածին քաղաք է, սակայն մեծապես առնչվում է հեղինակի՝ Գաբրիել Գարսիա Մարկեսի հայրենի Կոլումբիայում տեղի ունեցող իրադարձություններին:

Աշխատանքում տեղ գտած լրիվ համարժեքության օրինակների շարքին դասվում են նաև գիտական և տեխնիկական տերմինները: Հմտ. իսպ. *El ámbito de la casa es amplio y luminoso, con arcos de estuco...* (p. 6) ~ ռուս.՝ *Дом просторный и светлый, с гипсовыми оштукатуренными арками...* (с. 1) ~ *Տունն ընդարձակ ու լուսավոր է, գիպսից ծեփված կամարներով* (//ՎՏՊ// էջ 6): *Գիպսը* շինարարության և բժշկության մեջ օգտագործվող նյութ է, որն իսպաներենից ռուսերեն և հայերեն թարգմանելիս բովանդակային լրիվ համարժեքություն է դրսևորում՝ ռուսերեն՝ *ГИПСОВЫМИ* և հայերեն՝ *գիպսից*:

Լրիվ համարժեքության օրինակներ կան նաև այն բառային միավորների թարգմանությունների ժամանակ, որոնք իմաստային առումով մոտ են վերոնշյալ երկու խմբերին, օրինակ՝ ամսվա և շաբաթվա օրեր, օրինակ՝ իսպ. *Fue habituándose poco a poco a los bochornos de octubre...* (p. 148) ~ անգլ.՝ *Little by little he grew accustomed to the sultry heat of October...* (p. 84) ~ *քիչ-քիչ վարժվեց հոկտեմբերյան կիզիչ շոգերին:* (//ՄԽԺ// էջ 106): Իսպաներեն՝ *de octubre* բառային միավորն անգլերենում թարգմանվել է՝ *of October* և հայերեն՝ *հոկտեմբերյան*: Հայերենում *հոկտեմբերյան* ածականով թարգմանությունը պայմանավորված է իսպաներեն՝ *de octubre*, բառացի թարգմանաբար՝ *հոկտեմբերի*, որից անգլերեն՝ *of October*՝ *հոկտեմբերի* գոյական անվան սեռական հոլովի առկայությամբ:

Շաբաթվա օրերի թարգմանությունը ևս դասվում է լրիվ համարժեքության խմբին՝ հմտ. իսպ. *Su día diferente era el domingo.* (p. 22) ~ անգլ.՝ *His Sundays were different.* (p. 7) ~ *Բժշկի կիրակիներն այլ էին:* (//ՄԽԺ// էջ 10): Իմաստային լրիվ համարժեքություն առկա է իսպաներեն *domingo* և անգլերեն *Sunday* թարգմանության միջև: Անգլերենից հայերեն թարգմանությունը ևս կատարվել է լրիվ համարժեքությամբ, հայերեն՝ *կիրակի* թարգմանությամբ: Հայերեն թարգմանության նախադասությունը կազմվել է անգլերենի նմանությամբ: Հայերենում և անգլերենում ենթակայի պաշտոն զբաղեցնող *կիրակի* բառը բնագրում ստորոգելիական վերադիր է: Բնագրում առկա *día*՝ *օր*, բառը դուրս է մղված անգլերեն և հայերեն թարգմանություններում: Բայց մի թե ճիշտ կլինեք բառացի թարգմանել բնագրից՝ *բժշկի տարբեր(վող) օրը կիրակին էր*: Իհարկե, ո՛չ: Անգլերենում միևնույն՝ *day* բառի ևս մեկ անգամ կիրառությունը կառաջացներ լեզվական անհարկի կրկնություն, որովհետև *Sunday* բառի կազմության մեջ առկա է *day* բառը: Ծագումնաբանական տվյալները համեմատելիս նմանություն առկա է իսպաներեն և հայերեն տարբերակներում, ինչպես՝ *domingo*<sup>9</sup>, սերում է լատիներեն՝

<sup>9</sup> <http://etimologias.dechile.net/?domingo>.

*dominicus, (diēs), Dominica 'the day of the Lord (Աստծո օր), և կիրակի, որը հունական ծագում ունի՝ χυριαχή «կիրակի»*. նշանակում է՝ «*տերունական» (արմատը χύριος «տէր»)*<sup>10</sup>: Անգլերեն համարժեք բառը՝ *Sunday*<sup>11</sup>, հին անգլերենից թարգմանաբար նշանակում է՝ *արևի օր*:

Այս խմբի մեջ ներառվում են նաև թվականները. հմմտ.՝ իսպ.՝ *...creyó prudentes dos condiciones finales...* (p. 104) ~ անգլ.՝ *...two final conditions were prudent...* (p. 57) ~ *Երկու վերջնական հանգամանք կար...* (//ՄԽԺ// էջ 74): Իսպաներենից՝ *dos* թվականի անգլերեն և հայերեն թարգմանությունն է՝ համապատասխանաբար՝ *two* և *երկու* թվականները:

Երբեմն թվականները թարգմանվել են ոչ ճիշտ, օրինակ՝ իսպ.՝ *...tenía la determinación irrevocable de quitarse la vida a las sesenta años.* (p. 18) ~ անգլ.՝ *...he had made the irrevocable decision to take his own life when he was seventy years old.* (p. 11) ~ *...նա անդառնալիորեն վճռել էր վաթսուներ տարեկանը լրանալուն պես անպայման վերջ տալ կյանքին:* (//ՄԽԺ// էջ 17): Իսպաներեն *sesenta*-վաթսու թվականի անգլերեն թարգմանությունն է՝ *seventy-յոթանասուն*, այնինչ հայերեն թարգմանության մեջ *վաթսուն է*:

Դասական թվականների թարգմանությունը ևս կարող է դիտվել որպես լրիվ համարժեքության օրինակ՝ իսպ.՝ *...por su parte, había sido nombrado ayudante primero del telegrafo...* (p. 103) ~ անգլ.՝ *...for his part, had received provisional appointment as First Assistant at the telegraph office...* (p. 57) *...ժամանակավորապես ստանձնել էր հեռագրատան առաջին օգնականի պաշտոնը...* (//ՄԽԺ// էջ 74): *Առաջին* դասական թվականը հայերենում լրիվ համարժեք է անգլերեն *first-առաջին*, վերջինս էլ իսպաներեն *primero-առաջին* դասական թվականին:

Աշխատանքում քննվել են նաև լրիվ համարժեքության օրինակներ այլ լեզվական միավորների թարգմանությունների դեպքում: Լրիվ համարժեքության վառ օրինակ է հետևյալը՝ իսպ.՝ *...revisé palmo a palmo...* (p. 13) ~ ռուս.՝ *...стал разглядывать ее пядь за пядью.* (с. 4) ~ *...սկսեցի զննել նրան թիզ առ թիզ:* (//ՎՏՊ// էջ 36): Սա թարգմանության մեջ հանդիպող այն հազվադեպ օրինակներից է, երբ երեք լեզուներում իմաստի դրսևորման համար ընտրված է միևնույն կառուցվածքն ունեցող լեզվական միավոր՝ իսպաներեն *palmo a palmo* ~ *пядь за пядью* ~ *թիզ առ թիզ*:

Ստորև բերվող օրինակում բնագրից անգլերեն և անգլերենից հայերեն բարդ բառերի թարգմանության ժամանակ առկա է լրիվ համարժեքություն: Օրինակ՝ իսպ.՝ *...que se había hecho fotógrafo de niños por necesidad, y llegó a ser el más solicitado de la provincial...* (p. 50) ~ անգլ.՝ *...that he had become a photographer of children out of necessity*

<sup>10</sup> Ջր. Աճառյ ան, Հայերեն արմատական բառարան, Կ. Բ. Ե., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1973, էջ 598: Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Կ. 2, Ե., Հայկական ՍՍՌ պետական հրատարակչություն, 1944, էջ 440:

<sup>11</sup> [http://www.etymonline.com/index.php?allowed\\_in\\_frame=0&search=sunday&searchmod e=none](http://www.etymonline.com/index.php?allowed_in_frame=0&search=sunday&searchmod e=none).



and had become the most successful one in the province... (p. 24) ~ ...որ կարիքից դրդված լուսանկարիչ էր դարձել շրջանում ամենահաջողված լուսանկարիչը... (//ՄԽԺ// էջ 34): Իսպաներեն՝ *fotógrafo-լուսանկարիչ*, անգլերենում թարգմանվել է՝ *photographer-լուսանկարիչ*, որից հայերեն թարգմանությունն է՝ *լուսանկարիչ*:

Ատենախոսության մեջ տեղ են գտել այնպիսի օրինակների վերլուծություններ, որոնցում լրիվ համարժեքությունը երևան է գալիս բայական հարադրությունների թարգմանության ժամանակ՝ օրինակ՝ իսպ.՝ ...*y tuvieron que irse tan intrigados como vinieron...* (p. 35) ~ անգլ.՝ ...*and they had to leave as curious as when they arrived...* (p. 15) ~ ...սակայն *ստիպված էղան հեռանալ ճիշտ այնպես, ինչպես եկել էին...* (//ՄԽԺ// էջ 23): *Tuvieron que* ~ *had to* ~ *ստիպված լինել* - բառացի համընկնում են, որին հաջորդող բայերն այս օրինակում նույնպես նույն ձևն ու բովանդակությունն ունեն *irse* ~ *leave* ~ *հեռանալ*:

Թարգմանության մեջ բառային միավորների զուգադրման դեպքում առավել տարածված երևույթ է *մասնակի կամ հարաբերական համարժեքությունը*, որը թարգմանության համար հիմք լեզվի (որից կատարվում է թարգմանությունը) մեկ միավորի դիմաց թարգմանվող լեզվում մի քանի համարժեքների առկայությունն է և հակառակը<sup>12</sup>: Օրինակ՝ իսպ.՝ *Cuando Damiana se hizo vieja no se volvió a cocinar en casa* (p. 9) ~ ռուս.՝ *Когда Дамиана состарилась, она перестала приходить готовить...* (с. 3) ~ *Երբ Դամիանան ծերացավ, էլ չէր գալիս եփել-թափելու...* (//ՎՏՊ// էջ 21): Իսպաներենում *cocinar* բայը թարգմանաբար նշանակում է *եփել*, որն անգլերենում թարգմանվել է *готовить*՝ *եփել*, իսկ հայերենում համարժեք իմաստն արտահայտվել է բայական հարադրությամբ՝ *եփել-թափել*, որն իր մեջ ներառում է ոչ միայն *եփելը*, այլև *տնային տնտեսության այլ աշխատանքներ*: Թեպետ թարգմանությունը կատարվել է ոչ լրիվ համարժեքությամբ, բայց հայ թարգմանիչը կարողացել է անգլերենի միջոցով ճիշտ ընկալել բնագրում եղած համատեքստը և այն վերարտադրել հայերենում:

Հաջորդ օրինակում ևս թարգմանվող լեզվում լեզվական միավորների շրջանակն առավել լայն է, քան այն լեզվում, որից կատարվում է թարգմանությունը: Օրինակ՝ իսպ.՝ *Los sábados, la pobrería mulata abandonaba en tumulto los ranchos de cartones...* (p. 30) ~ անգլ.՝ *On Saturdays the poor mulattoes, along with all their domestic animals and kitchen utensils, tumultuously abandoned their hovels of cardboard...* (p. 12) ~ *Շաբաթ օրերին աղքատ մուլաթներն իրենց ընտանի կենդանիներով ու խոհանոցային ողջ կահ-կարասիով (կրկնավոր բարդություն) հարապ-հրոցով թողնում էին ճահճերի ստվարաթղթե ու թիթեղյա իրենց քողտիկներն...* (//ՄԽԺ// էջ 19): Իսպաներեն՝ *los sábados-շաբաթ օրերը*, անգլերենում թարգմանվել է լրիվ համարժեքությամբ՝ *on Saturdays*: Մասնակի համարժեքություն դրսևորվել է հայերեն թարգմանության մեջ՝ *շաբաթ օրերին* արտահայտությամբ, որը բացատրվում է հայերենում՝ *շաբաթ*<sup>13</sup> բառի

<sup>12</sup> Տե՛ս Ս. Մ. Բարխոյան, նշվ. աշխ., էջ 75:

<sup>13</sup> <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=6&query=%D5%B7%D5%A1%D5%A2%D5%A1%D5%A9>

իմաստային առավել լայն շրջանակ ունենալով: Հայերենում *շաբաթ* նշանակում է ն՛ *շաբաթ օրը*, ն՛ *յոթնօրյա ժամանակը*, որը սկսվում է երկուշաբթիից և ավարտվում կիրակիով ի տարբերություն իսպաներենի և անգլերենի, որոնք առանձին բառային միավորներ ունեն այս երկու իմաստների համար՝ իսպաներեն *sábado-շաբաթ օր, semana-շաբաթ (յոթնօրյա ժամանակը)*, անգլերեն՝ *Saturday-շաբաթ օր, week-շաբաթ (յոթնօրյա ժամանակը)*:

Մասնակի համարժեքությունը, ինչպես արդեն նշվել է, որոշ դեպքերում պայմանավորված է թարգմանության լեզվի (սույն առենախոսության պարագայում՝ իսպաներենի) տվյալ բառային միավորի իմաստային առավել լայն շրջանակով, ի տարբերություն անգլերեն և հայերեն թարգմանությունների: Օրինակ՝ *tocador* (p. 50) ~ անգլ.՝ *dressing table* (p. 25) ~ *գարդասեղան* (//ՄԽԾ// էջ 34): *Tocador*<sup>14</sup> իսպաներենում արտահայտում է մի շարք իմաստեր՝ 1) *կահույք, հիմնականում սեղանի տեսքով, որն ունի հայելի և այլ պարագաներ, նախատեսված է մազերը հարդարելու և զարդարվելու համար*, 2) *սենյակ՝ նախատեսված զարդարվելու և մազերի հարդարման համար*, 3) *տարբեր տիպի զարդեր և պարագաներ պահելու համար նախատեսված դարակ*, 4) *կտոր, որը ծառայում է գլուխը ծածկելու և զարդարելու համար*: Անգլերենում այն թարգմանվել է առավել նեղ իմաստ ունեցող բարդությամբ՝ *dressing table*<sup>15</sup>-սեղան, որը *հիմնականում ունի հայելի, որի առջև կարելի է նստել և զարդարվել*: Անգլերենից հայերեն թարգմանությունը ևս հանգեցրել է առավել նեղ իմաստ ունեցող բարդության կիրառման՝ *գարդասեղան-զարդարվելու համար նախատեսված սեղան*:

Երբեմն հայերեն թարգմանության մեջ համարժեք միավոր ընտրվել է առօրյա-խոսակցական ոճին բնորոշ արտահայտություն, օրինակ՝ իսպ.՝ ... *con mujeres y niños y animales y toda clase de enseres domésticos, atravesaron la sierra...* (p. 6) ~ ռուս.՝ ...*забрав жен, скотину и домашний скраб, сумели перебраться через горы...* (с. 3) ~ *կանանցով, երեխաներով, ընտանի կենդանիներով և եղած-չեղածով կտրեցին անցան այն լեռնաշղթան...* (//ՀՏՄ// էջ 13): Իսպաներենում ընդգծված հատվածը նշանակում է՝ *ամեն տիպի կենցաղային ապրանքներ*, նույնը և ռուսերեն թարգմանության դեպքում՝ *կենցաղային ապրանքներ*: *Եղած-չեղած* կրկնավոր բարդության փոխարեն հայերեն թարգմանության մեջ նույնպես կարող էր կիրառվել՝ *կենցաղային ապրանքներ* արտահայտությունը. այս պարագայում իմաստն առավել լայն է ստացվել, քան բնագրում:

Երբեմն մասնակի համարժեքությունը դրսևորվել է միջնորդ թարգմանության և հայերենի միջև, այնինչ իսպաներենը և հայերեն թարգմանությունը համեմատելիս հանդիպում ենք լրիվ համարժեքության: Օրինակ՝ իսպ.՝ ...*y lo descuartizó presa por presa con una ternura maligna...* (p. 393) ~ անգլ.՝ ...*and she cut him into pieces with malicious tenderness...* (p. 235) ~ *ու չարախիինը քնքշությամբ քաժան-քաժան արեց...* (//ՄԽԾ// էջ 293): Իսպաներենից *presa por presa-մաս-մաս*, անգլերենում թարգմանվել է *cut him into*

<sup>14</sup> <http://dle.rae.es/?id=ZvyFMItZvzUXTr>

<sup>15</sup> <http://www.dictionary.com/browse/dressing-table?s=t>

*pieces' նրան մասերի բաժանեց* արտահայտությամբ, որը ևս իմաստային համարժեք է, սակայն արտահայտված չէ բարդությամբ: Կրկնավոր բարդության կիրառությունը հայերեն թարգմանության մեջ տեղին է, քանի որ ոչ միայն բնագրում առկա *presa por presa* բարդության իմաստային համարժեքն է, այլև ճշգրտորեն ապահովում է ձևային համապատասխանությունը:

Ստորև բերվող օրինակներում մասնակի համարժեքությունն արտահայտվել է այլ օրինաչափությամբ, այն է՝ հայերենում բարդություններով թարգմանվել են իսպաներենի և անգլերեն/ռուսերենի պարզ բառային միավորները: Օրինակ՝ իսպ. *...salvo el envejecer despacio entre laureles marchitos y ciénagas podridas.* (p. 29) ~ անգլ. *...except a slow aging among withered laurels and putrefying swamps.* (p. 12) ~ *...բացի թառամած պսակների ու նեխող ճահիճների միջև կամաց-կամաց գոսնելուց.* (//ՄԽԺ// էջ 19): *Կամաց-կամաց* բարդության փոխարեն հայերեն թարգմանության մեջ կարող էր լինել *դանդաղ* մակբայը, այդ դեպքում կստացվեր լրիվ համարժեքություն, իսպ. *despacio-դանդաղ*, անգլ. *slow-դանդաղ*, այնինչ հայերենում առավել ընդունելի է *կամաց-կամաց գոսնել*, քան *դանդաղ գոսնել* արտահայտությունը, քանի որ կրկնավոր բարդության միջոցով արտահայտվել է նաև գործողության դինամիկան:

Երբեմն մասնակի համարժեքությունը հանգեցրել է թարգմանվող տեքստում իմաստային կոնկրետացման օրինակ՝ իսպ. *varón* (p. 68) ~ անգլ. *firstborn* (p. 38) ~ *առաջնեկ* (//ՄԽԺ// էջ 48): *Առաջնեկ* բարդությամբ է թարգմանվել անգլ. *firstborn* առաջինը ծնված բարդությունը, որն էլ համարժեք է իսպաներեն *varón*՝ *գավակ, որդի* բառին: Հայերեն և անգլերեն թարգմանություններում կոնկրետացվել է բնագրի համարժեք իմաստը:

Աշխատանքում տեղ են գտել բազմաթիվ օրինակներ, որոնցում հայերեն թարգմանությունը կատարում է լեզվական տնտեսողի դեր: Օրինակ՝ իսպ. *túnica con muchos pliegues* (p. 86) ~ անգլ. *tunic with many folds* (p. 46) ~ *բազմաձալ իրանակալ* (//ՄԽԺ// էջ 60): Բազմաձալ բարդության իմաստն անգլերենում և բնագրում արտահայտվել է *with many folds* և *con muchos pliegues* կապակցություններով, որոնք մոտ են թե՛ կազմությամբ, թե՛ իմաստով՝ այն է՝ *բազմաթիվ ծալքերով*: Հայերեն բառակազմության ճկունությունն ու հարստությունը թարգմանչին հնարավորություն են տվել մեկ բառով արտահայտելու երկարաշունչ նախադասություններով արտահայտված իմաստը:

Ատենախոսության երրորդ՝ «Դարձվածային միավորներով թարգմանությունը», գլխում քննվել են դարձվածային միավորներով կատարված հայերեն թարգմանությունների առանձնահատկությունները, ներկայացվել են օրինակներ, որոնցում բնագրի, միջնորդ թարգմանությունների և հայերեն թարգմանության միջև առկա են ձևաիմաստային միևնույն կառույցն ունեցող դարձվածային միավորներ: Օրինակ՝ իսպ. *...y la sangre se le volví de espuma (արյունը փրփուր դառնալ) por la urgencia de verlo...* (p. 84) ~ անգլ. *...and her blood frothed (արյունը եռալ) with the need to see him....* (p. 45) ~ *...ու երբ արյունը սկսեց եռալ նրան տեսնելու կարոտից...* (//ՄԽԺ// էջ 59): *Փրփուր դառնալու* երևույթը կապված է *եռալու* գործընթացի հետ, հետևաբար

բնագրում հանդիպող դարձվածային միավորը ճշգրտությամբ է թարգմանվել: Կան օրինակներ, որոնցում դարձվածային միավորները կազմված են նույն անվանական բաղադրիչից: Օրինակ՝ իսպ. *Pero a la hora de la decisión final no tuvo corazón para causarle a la sobrina el mismo infortunio irreparable...* (p. 98) ~ անգլ. *but when it was time to for the final decision, she did not have the heart to cause her niece the same irreparable grief ...* (p. 63) ~ Սալայն վճռական պահին սիրտ չունեցավ եղբոր աղջկան մատնելու նույն այն վշտին... (//ՄԽԾ// էջ 69): Բապաներենից ընդգծված հատվածի թարգմանությունն է՝ *no tuvo corazón – սիրտ չունեցավ*, որն անգլերենում թարգմանվել է՝ *did not have the heart – սիրտ չունեցավ*, դարձվածային միավորով, հայերենում անգլերենից լրիվ համարժեքությամբ դարձվածային միավորով թարգմանությունն է՝ *սիրտ չունեցավ*: Այն դեպքերում, երբ դարձվածային միավորը թարգմանության մեջ համարժեք է իսպաներեն և անգլերեն/ռուսերեն խոնարհված բային կամ դերբային, հայերեն տեքստը դարձել է առավել գեղարվեստական և գեղեցիկ: Օրինակ՝ իսպ. *...Sánchez andaba delirando (խենթացել էր) de ilusiones después de visitar a una pitosina...* (p. 123) ~ անգլ. *...Sanchez was delirious (խենթացել էր) with the hope after visiting a fortuneteller...* (p. 69) ~ Սանչեսը ոգևորությունից գլուխը կորցրել էր մի բախտագուշակի հետ հանդիպումից... (//ՄԽԾ// էջ 88): Ոգևորությունից գլուխը կորցնել դերբայական դարձվածը կիրառվել է փոխաբերական իմաստով և ավելի մոտ է գեղարվեստական ստեղծագործության ոգուն, թեպետ հայերենում կարելի էր օգտագործել *խենթանալ* բայը, ինչպես բնագրում է և անգլերեն թարգմանության մեջ:

Ատենախոսության **չորրորդ «Թարգմանական միջոցների գործադրումը և նրանց դերը», գլխում** ներկայացվել են լեզվաբանության մեջ առավել տարածում ունեցող թարգմանական միջոցների կամ հնարների կիրառության առանձնահատկությունները Մարկեսի երկերի հայերեն թարգմանություններում: Կարելի է թվարկել մի շարք հատկանիշներ, որոնք բնորոշում են թարգմանական միջոցների դերը հայերեն թարգմանություններում:

Աշխատանքում ուսումնասիրված մի շարք միջոցներից առաջինը՝ *փոխաբիանումը*, հայերեն թարգմանության մեջ ուղեկցվել է իմաստային որոշակիացմամբ, որն իր հերթին առաջ է բերել իմաստային տարբերակում:

Օրինակ իսպ. *Su obsesión era el peligroso estado sanitario de la ciudad.* (p. 149) ~ անգլ. *His obsession was the dangerous lack of sanitation in the city.* (p. 84) ~ Նրա *հիմնական մտահոգությունը քաղաքում հիգիենայի անչափ վտանգավոր բացակայությունն էր:* (//ՄԽԾ// էջ 107): Հայերեն թարգմանության մեջ գոյականով փոխաբիանվել է բնագրի ածականը *peligroso estado sanitario* ~ *dangerous lack of sanitation* ~ *հիգիենայի անչափ վտանգավոր բացակայություն*: Բապաներենից ընդգծված հատվածի թարգմանությունն է՝ *սանիտարական վտանգավոր վիճակ*, անգլերենում՝ *հիգիենայի վտանգավոր բացակայություն*: Հայերենում փոխաբիանումն ուղեկցվել է «իմաստային որոշակիացմամբ» (конкретизация значения), որը «թարգմանական տեխնիկա է, որն օգտագործվում է թարգմանվող լեզվում բնագրի իմաստն առավել կոնկրետ արտահայտելու համար: Իմաստային որոշակիացումն իր հերթին

ուղեկցվում է իմաստային տարբերակմամբ»<sup>16</sup>: Այն է՝ բնագրի՝ *սանկտարական վտանգավոր վիճակ* արտահայտությունը հայերենում որոշակիացել է դառնալով *հիզդենայի անչափ վտանգավոր բացակայություն*:

Փոխարինման կիրառությունը երբեմն հանգեցրել է *իմաստային ընդհանրացման*, որի նպատակն է խուսափել անհարկի արտահայտությունների կիրառությունից: Թարգմանիչը հաճախ դիմել է այս միջոցին՝ նախադասության մեջ հավելելով այս կամ այն լեզվական միավորը, քանի որ բնագրից բառացի թարգմանելու դեպքում թյուրընկալում կառաջանար:

Թարգմանական մյուս *ձևափոխում* կոչվող միջոցի հիմնական առանձնահատկությունը տեքստը թարգմանվող լեզվի ոգուն համապատասխան դարձնելն է: Հիմնականում *ձևափոխման* շնորհիվ հայերեն թարգմանության մեջ առավել հասկանալի է դառնում բնագրի լեզուն:

Օրինակ իսպ. *Así fue.* (p. 225) ~ անգլ. *And he did.* (p. 131) ~ *Եվ չորժեց իր խոստումը*: (//ՄԽԺ// էջ 165): Իսպ. *así fue* արտահայտությունը բառացի թարգմանվում է՝ *այդպես էլ եղավ*, անգլերենում *and he did - այդպես էլ արեց*: Հայերեն *և չորժեց իր խոստումը* թարգմանությունը կազմվել է ժխտական նախադասությամբ և իմաստապես համարժեք է անգլերեն թարգմանությանը, նաև բնագրին:

*Համարժեքությունը* կիրառվել է խոսակցական ոճին պատկանող արտահայտությունների թարգմանության ժամանակ՝ տեքստն ամբողջապես փոխակերպելով: *Համարժեքությունը* հաճախ ուղեկցվել է *իմաստային փոխհատուցմամբ*: *Համարժեքության* հիանալի օրինակներ են սասցվածքները, դարձվածային միավորները, օրինանքները, անեծքները և այլն: Օրինակ իսպ. *Eran para un amor que se lo llevó el carajo.* (p. 243) ~ անգլ. *“They were for a love that has gone to hell.” he said.* (p. 143) ~ *«Դրանք մի սիրո համար էին, որ գլխովին գրողի ծոցը գնաց»*, – *սասց նա*: (//ՄԽԺ// էջ 179): *Գրողի ծոցը գնալ* թարգմանությունը համարժեք է՝ անգլերեն *go to hell (դժոխք գնալ)*, և իսպաներեն *llevarse el carajo* արտահայտություններին (իմաստային առումով բնագրի տարբերակը նույնն է, սակայն բառացի թարգմանության դեպքում գոեհկաբանություն է ստացվում): Ելնելով *համարժեքություն* թարգմանական միջոցի կիրառության բազմաբանակությունից եզրակացնում ենք, որ Լատինական Ամերիկայի խոսակցական բառապաշարում բազմաթիվ են այնպիսի արտահայտություններ, որոնք ըստ հայերեն լեզվամտածողության՝ գոեհկաբանություններ են, այդ պատճառով թարգմանիչը փոխակերպել է դրանք ընտրելով առավել մեղմ՝ հայերեն լեզվամտածողությանը հարիր արտահայտություններ:

Թարգմանիչը կիրառել է նաև *հարմարեցում (ադապտացիա)* կոչվող թարգմանական միջոցը: Բուն նպատակը բնագրում նկարագրվող որևէ իրողության բացակայության պայմաններում հայերենում այն ճշգրիտ վերարտադրելն է:

<sup>16</sup> Я. И. Рецкер, Основы теории закономерных соответствий (Золян С.Т., Абрамян К.Ш., Лингвистические аспекты теории перевода, Ереван, Лингва, 2007, с. 72), с. 92.

*Հարմարեցման* հետ երբեմն կիրառվել է *ընդհանրացում* թարգմանական միջոցը: Օրինակ՝ իսպ.՝ *Les preparó una repugnante pócima de paico machacado...* (p. 14) ~ ռուս.՝ *Она приготовила тошнотворный чай из резаной пижмы...* (с. 8) ~ *Մանրացրած, փոշի դարձրած մեքսիկական թեյից անդուր տեսքով խմիչք պատրաստեց* (//ՀՏՄ// էջ 34): *Հարմարեցումը* հայերեն թարգմանության մեջ դրսևորվել է *մեքսիկական թեյ* արտահայտությամբ: Դա Լատինական Ամերիկայում աճող թեյի տեսակ է, որը բնիկների կողմից օգտագործվել է նաև բժշկական նպատակներով դեռևս մինչև իսպանացիների՝ Լատինական Ամերիկա գալը: Հայկական միջավայրում թեյի այդ տեսակը տարածված չէ, այդ իսկ պատճառով, բացի հարմարեցումից, հայ թարգմանիչը կիրառել է *ընդհանրացում* թարգմանական միջոցը, այսինքն՝ բնագրում առկա կոնկրետ թեյատեսակը ակամայից թարգմանել է *ընդհանուր իմաստով՝ մեքսիկական թեյ*:

Ատենախոսությունն ավարտվում է հետազոտության արդյունքներն ամփոփող հետևյալ եզրակացություններով:

ա) Լեզվամտածողական առանձնահատկությունները թարգմանության մեջ հաճախ դրսևորվել են լեզվական միավորի հավելմամբ, որի շնորհիվ խույս է տրվել անհասկանալի արտահայտությունների կիրառումից: Երբեմն նախադասությունը դարձել է առավել երկարաշունչ, բայց տեքստը կազմվել է հայեցի: Հավելման արդյունքում թարգմանության մեջ կոնկրետացել է բնագրի իմաստը, կատարվել է լեզվական տնտեսում: Թերևս ոչ բոլոր դեպքերում է հավելումը թարգմանության օգտին: Երբեմն աղավաղվել է բնագրի իմաստը:

բ) Ուսումնասիրության մեջ ներառված Մարկեսի երկերի հայերեն թարգմանությունները կատարվել են անգլերենից կամ ռուսերենից: Բնական է, որ միջնորդավորվածությունն իր կնիքն է ունեցել դրանց վրա: Երբեմն միջնորդավորված թարգմանության շնորհիվ հայերեն թարգմանության մեջ փոխվել է որևէ բառային միավորի հարանշանակային երանգը, և ըստ այդմ՝ հայերենում առավել ընկալելի է դարձել մարկեսյան ոգին: Որոշ դեպքերում այս փոփոխությունը հանգեցրել է իմաստի պարզեցման: Մակայն միշտ չէ, որ թարգմանիչը բառային միավորների ընտրության հարցում ճիշտ որոշում է կայացրել: Այլ լեզվական միավորների կիրառման դեպքում թարգմանությունը կատարվել էր առավել հստակ:

գ) Լեզվամտածողական տարբերությունների պատճառով հնարավոր բարդություններից խուսափելու համար հայերեն թարգմանություններում կիրառվել են ժողովրդախոսակցական մակարդակի պատկանող արտահայտություններ, որոնք նպաստել են տեքստը հայեցի ձևակերպելուն: Բացի այդ, բերվում են լեզվաբանական վերլուծության ենթարկված տիպական օրինակներ:

դ) Մարկեսի երկերի հայերեն թարգմանությունները քննելիս անդրադարձել ենք համարժեքության խնդրին՝ միջնորդ թարգմանությունների և բնագրի համեմատությամբ: Կան թարգմանության օրինակներ, որոնցում դրսևորվել է հատուկ անունների և աշխարհագրական անունների, գիտատեխնիկական տերմինների, ամսվա և շաբաթվա, ինչպես նաև թվական անունների լրիվ համարժեքություն: Վեր են

հանվել լրիվ համարժեքության օրինակներ նաև բառակազմական իրողությունների ուսումնասիրության արդյունքում:

ե) Բացի լրիվ համարժեքությունից, աստենախոսության մեջ տեղ է գտել նաև մասնակի կամ հարաբերական համարժեքության ուսումնասիրությունը: Ըստ այդմ՝ որոշ լեզվական միավորներ հայերենում մասնակի համարժեքությամբ են թարգմանվել համատեքստից էլնելով, այսինքն՝ անգլերենից կամ ռուսերենից համապատասխան հատվածի բառացի թարգմանությունը տվյալ համատեքստում կհանգեցնեք իմաստի թյուրընկալման, հետևաբար, թարգմանության լեզվում կատարվել են որոշակի փոփոխություններ:

զ) Մասնակի համարժեքությունը դրսևորվել է նաև այս կամ այն իմաստն ունեցող արտահայտությունների թարգմանության ժամանակ դրանց կազմում եղած անդամների քանակությամբ. հիմնականում հայերեն թարգմանություններում տվյալ իմաստն դրսևորվել է առավել քիչ քանակի անդամներ ունեցող արտահայտություններով, քան միջնորդ թարգմանություններում և իսպաներենում է, որից բխում է մասնակի կամ հարաբերական համարժեքության մյուս առանձնահատկությունը, այն է՝ հայերեն տեքստերի առավել հակիրճ ձևակերպումը, որի շնորհիվ կատարվել է լեզվական տնտեսում:

է) Աշխատանքում տեղ են գտել օրինակներ, որոնք պատկանում են մասնակի համարժեքության այն տեսակին, երբ բնագրից այս կամ այն լեզվական միավորի թարգմանության ժամանակ տվյալ միավորն ունի առավել լայն իմաստային շրջանակ, քան թարգմանվող լեզվում է, և հակառակը: Նմանօրինակ դեպքերում թարգմանվող լեզվում տվյալ իմաստը թեև արտահայտվել է մասնակի համարժեքությամբ, սակայն թարգմանության համար հիմնականում ընտրվել են համարժեք միավորներ:

ը) Երբեմն հայերեն թարգմանություններում հավելվել են լեզվական միավորներ բնագրում համարժեք միավորը չլինելու պայմաններում:

թ) Որոշ դեպքերում մասնակի համարժեքությունը հայերենում արտահայտվել է առօրյա-խոսակցական արտահայտությունների միջոցով, որի շնորհիվ տեքստն ըստ հայկական լեզվամտածողության է կառուցվել:

ժ) Թարգմանության մեջ բնական է նաև այս կամ այն լեզվական միավորի անտեղի կիրառումը. բացառություն չէ նաև Մարկեսի երկերի հայերեն թարգմանությունների լեզուն: Լրիվ և մասնակի համարժեքության տեսանկյունից հայերեն տեքստերի քննությունը ցույց է տվել, որ հայերենում, անտեսվելով հնարավոր լրիվ համարժեքության տարբերակը, ընտրվել է այնպիսի լեզվական միավոր, որն առաջացրել է մասնակի համարժեքություն, սակայն այս ընտրությունն անտեղի է եղել:

Դարձվածային միավորներով թարգմանությունն ուսումնասիրելիս վեր են հանվել հետևյալ առանձնահատկությունները.

ի) Հայերեն թարգմանություններում դարձվածային միավոր է կիրառվել բնագրի և միջնորդ թարգմանության լեզուներում միևնույն իմաստն ու կառուցվածքն ունեցող համարժեք միավորների դիմաց: Սա նշանակում է, որ ժողովուրդների

լեզվամտածողությունն այդ դեպքերում համընկել է, քանի որ դրանք ժողովրդախոսակցական ոճին բնորոշ միավորներ են: Հանդիպում են օրինակներ, որոնցում դարձվածային միավորները կազմված են նույն անվանական բաղադրիչից: Դարձվածային միավորը թարգմանության մեջ համարժեք է իսպաներեն և անգլերեն/ռուսերեն խոնարհված բային կամ դերբային: Այս օրինակներում դարձվածային միավորի հիմնական նպատակը տեքստն առավել գեղարվեստական ներկայացնելն է: Որոշ դեպքերում այն հայերենում առավել հակիրճ է դարձրել բնագրի տեքստը:

Թարգմանության մեջ լայն կիրառություն ունեցող միջոցների կամ թարգմանական հնարների ուսումնասիրությունը ևս տեղ է գտել սույն ատենախոսության մեջ:

լ) Ուսումնասիրված միջոցներից առաջինը՝ փոխարինումը, հայերեն թարգմանություններում ուղեկցվել է իմաստային որոշակիացմամբ, որն իր հերթին ուղեկցվել է իմաստային տարբերակմամբ: Թարգմանության մեջ մի խոսքի մասն այլ խոսքի մասով փոխարինելու արդյունքում տեքստը կառուցվել է հայեցի, որոշակի է դարձել բնագրի իմաստը: Փոխարինման կիրառության շնորհիվ երբեմն կատարվել է իմաստային ընդհանրացում: Հայ թարգմանիչները հաճախ դիմել են այս միջոցին՝ նախադասության մեջ հավելելով այս կամ այն լեզվական միավորը, քանի որ բնագրից բառացի թարգմանելու դեպքում թյուրընկալում կառաջանար:

ի) Ձևափոխում միջոցի հիմնական առանձնահատկությունը թարգմանությունը լեզվի ոգուն համապատասխան դարձնելն է: Ձևափոխման շնորհիվ հայերեն թարգմանության մեջ առավել հասկանալի է դարձել բնագրի տեքստը: Երբեմն այն օգտագործվել է փոխարինում թարգմանական միջոցի հետ:

ծ) Համարժեքությունը կիրառվել է խոսակցական ոճին պատկանող արտահայտությունների թարգմանության ժամանակ՝ տեքստն ամբողջապես փոխակերպելու միջոցով: Ելնելով այս թարգմանական միջոցի կիրառության բազմաքանակությունից՝ եզրակացնում ենք, որ Լատինական Ամերիկայի խոսակցական լեզվում բազմաթիվ են այնպիսի արտահայտություններ, որոնք ըստ հայկական լեզվամտածողության գոեհկաբանություններ են, այդ պատճառով թարգմանիչները փոխակերպել են դրանք՝ ընտրելով առավել մեղմ արտահայտություններ: Համարժեքությունն ուղեկցվել է իմաստային փոխհատուցմամբ:

կ) Թարգմանիչները կիրառել են նաև հարմարեցում կամ ադապտացիա կոչվող թարգմանական միջոցը: Հիմնական նպատակը բնագրում նկարագրվող որևէ իրողության թարգմանվող լեզվում դրա բացակայելու պայմաններում ճշգրիտ ներկայացնելն է: Հարմարեցման հետ երբեմն կիրառվել է ընդհանրացում թարգմանական միջոցը:



Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում:

1. **Հայրիկյան Ե.** Իսպաներենի վերջածանցներով կազմությունների թարգմանությունը հայերենում և անգլերենում (Գ. Գ. Մարկեսի «Մերը խոլերայի ժամանակ» վեպի հիման վրա) // ՀՀ. ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ. Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2012, էջ 192-201:
2. **Հայրիկյան Ե.** ԼԵԶՈՒ և ՄՇԱԿՈՒՅԹ (Գ. Գ. Մարկեսի «Մերը խոլերայի ժամանակ» վեպի հիման վրա) // Երևանի պետական համալսարան. Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան 2013, էջ 34-38:
3. **Հայրիկյան Ե.** Գաբրիել Գարսիա Մարկեսի «Մերը խոլերայի ժամանակ» երկում կիրառված դարձվածային միավորների հայերեն թարգմանությունը: // ՀՀ. ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ. Երիտասարդ լեզվաբանների հանրապետական III գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2013, էջ 49-57:
4. **Հայրիկյան Ե.** Գ. Գ. Մարկեսի «Մերը խոլերայի ժամանակ» վեպում կիրառված թարգմանական միջոցներն ու դրանց դերը թարգմանության մեջ // Երևանի պետական համալսարան. ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2015, էջ 67-74:

5. **Հայրիկյան Ե.** Միջնորդավորված թարգմանության հարցը Մարկեսի երկերում // ՀՀ. ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ. Երիտասարդ լեզվաբանների հանրապետական V գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2015, էջ 18-25:

**АЙРИКЯН ЕЛЕНА ШАГЕНОВНА**

**ЯЗЫКОВЫЕ ОСОБЕННОСТИ АРМЯНСКИХ ПЕРЕВОДОВ ПРОИЗВЕДЕНИЙ  
ГАБРИЕЛЯ ГАРСИА МАРКЕСА (ПО СРАВНЕНИЮ С ОРИГИНАЛОМ,  
РУССКИМИ И АНГЛИЙСКИМИ ПЕРЕВОДАМИ)**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук  
по специальности 10.02.02 – “Общее и сравнительное языкознание”

Защита состоится 3 октября 2016 г. в 15<sup>00</sup> ч. на заседании специализированного совета  
ВАК 019 по лингвистике при Институте языка им. Р.Ачаряна НАН РА  
(адрес: Ереван, 0015, ул. Григора Лусаворича 15)

**РЕЗЮМЕ**

Цель диссертации – представить языковые особенности армянских переводов произведений Г. Г. Маркеса, выявить особенности языкового мышления, целесообразность использования различных языковых средств – включая фразеологизмы, лексические, словообразовательные и грамматические средства выражения, представление их роли и значения в армянских переводах по сравнению с оригиналом, русскими и английскими

переводами. Так как армянские тексты были переведены опосредованно – с русских и английских переводов соответствующих произведений, в исследовании была также поставлена цель выявить влияние промежуточных переводов.

Актуальность диссертации обусловлена тем, что это первая попытка всестороннего анализа языка армянских переводов произведений Г. Г. Маркеса, с целью выявления их уровня и художественной эквивалентности средств выражения с соответствующими формами оригинала, а также русских и английских переводов.

Научная новизна и практическое значение диссертации заключаются в том, что настоящее исследование, как первое обращение к анализу языка армянских переводов произведений Г. Г. Маркеса, с теоретической и практической точек зрения будет способствовать дальнейшему изучению языка переводов произведений Г. Г. Маркеса и других авторов. Помимо этого, рассмотренные вопросы и результаты сравнительного анализа могут представлять определенный интерес для лингвистов, занимающихся вопросами общего и армянского языкознания, теорией перевода, а также для практических переводчиков и студентов филологических факультетов.

Новизна исследования заключается в том, что была представлена целенаправленность использования ряда распротраненных в переводческой практике языковых средств выражения.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения и списка использованной литературы.

**Во введении** рассматриваются вопросы, связанные с общей лингвистической характеристикой перевода, приведены наиболее распространенные определения перевода в современном языкознании. Подчеркивается важность проблемы эквивалентности при переводе, отмечаются актуальность, теоретическое и практическое значение, цель и новизна исследования, а также определяются структура и композиционные особенности работы.

**В первой главе – «Общая характеристика армянских переводов произведений Маркеса»** – рассматривается связь языкового мышления между двумя и более языками. Отмечается, что особенности языкового мышления зачастую выражаются дополнительными языковыми средствами, цель которых – сделать перевод наиболее близким восприятию армянского читателя, при этом отмечается, что в языке перевода иногда встречаются излишние пояснения и неуместное использование некоторых языковых средств. Обращается внимание также на различные коннотативные значения слов в разных языковых культурах.

**Во второй главе – «Эквивалентность армянских переводов произведений Г. Г. Маркеса»** - представлен анализ эквивалентности лингвистических единиц. Этот раздел тоже снабжается соответствующими текстовыми примерами, отражающими результаты сравнительного анализа эквивалентных языковых средств исходного текста, русского и английского переводов и армянского перевода.

**В третьей главе – «Перевод оборотов речи»** – представляются особенности перевода различных речевых выражений со сходной структурой и значением в испанском языке и в языках переводов – русском, английском и армянском. В армянских переводах в основном сохранены значение и художественная ценность оборотов речи оригинала, и одновременно отражены специфические особенности армянского языка.

**В четвертой главе – «Использование и роль различных средств перевода»** - сделана попытка отобразить использование особых средств в армянских переводах при передаче специфических конструкций языка Г. Г. Маркеса. Благодаря использованию этих средств армянский текст приобрел конкретность, стало возможным описание некоторых специфических ситуаций, не существующих в армянской действительности.

**В заключении** даются основные выводы исследования.

**YELENA SHAHEN HAYRIKYAN**

**THE LINGUISTIC PECULIARITIES OF THE ARMENIAN TRANSLATIONS OF  
THE COMPOSITIONS OF GABRIEL GARCIA MÁRQUEZ (IN THE COMPARISON  
WITH THE ORIGINAL TEXTS, RUSSIAN AND ENGLISH TRANSLATIONS)**

Thesis for the degree of candidate of philological sciences, specialty 10.02.02-  
“General and Comparative Linguistics”

The defense of the thesis will be held on October 3, 2016, at 15<sup>00</sup>, at the session of the  
Specialized Council 019 on Linguistics HAC (Higher Attestation Commission) in the  
Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences, RA (address:  
Yerevan, 0015, st. G. Lusavorich, 15)

**SUMMARY**

The aim of the dissertation is to represent the linguistic characteristics of the Armenian translations of the compositions of G. G. Márquez, to describe the peculiarities of the language mentality, the expediency of the application of different linguistic means including phraseologies, formative and grammatical realities, to highlight their role and significance in the Armenian translations in comparison with the original texts, Russian and English translations. As the Armenian texts have been a result of indirect translations from the Russian and English translations of correspondent compositions, the aim of the dissertation is to reveal their influence.

The modernity of the thesis lies in the fact that this is the first attempt of multilateral analysis of the language of the Armenian translations of the compositions of G. G. Márquez aiming to describe the levels of the equivalence of the means of expressions.

The novelty and practical significance of the dissertation lies in the fact, that the present study, being the first attempt of the presentation and valuation of the language of the Armenian translations of the compositions of G. G. Márquez from its theoretical and practical points of view will contribute to the further research of the language of translations of G. G. Márquez and other authors. Besides, the issues described in the thesis and the results of the comparative analysis can serve as an object of interest for linguists involved in general and Armenian linguistics, as well as for translators and students of professional faculties.

The novelty of the dissertation is also to represent the expediency of the application of a series of means of translation widely used in the practice of translation.

The dissertation consists of an introduction, four chapters, conclusions and bibliography.

**The introduction** describes the general linguistic characteristics of translation; the most expanded definitions of translation in modern linguistics are given. Underlining the importance of the problem of equivalence in translation, the modernity, theoretical and practical significance, the aim and the novelty of the theme of the dissertation are mentioned. Besides, the structure and the compositional peculiarities of the research are determined.

In the **first chapter** entitled “**The general characteristics of the Armenian translations of the compositions of Márquez**”, the connection of the language mentality between two and more languages is revealed. It is presented that the characteristics of the language mentality have sometimes been expressed with the addition of some linguistic units, the aim of which is to make the translation more native to Armenian readers, but it is also mentioned, that in the language of translation sometimes unnecessary explanations and inappropriate use of some linguistic resources are used.

The **second chapter** entitled “**The equivalence in the Armenian translations of the compositions of G. G. Márquez**”, the analysis of the equivalence of linguistic units in the Armenian translations of the works of Márquez is presented. This chapter, like the others, can also serve as an investigation, based on correspondent patterns that are revealed in the result of the comparative analysis.

In the **third chapter**, “**The translation with the locutions**”, the characteristics of the translation with the locutions that have the same structure and significance are described in the original texts in Spanish and its Russian, English and Armenian translations. In the Armenian translations the significance and linguistic values of the locutions of the original texts are generally saved, and, simultaneously, the specific characteristics of the Armenian language are reflected.

In the **fourth chapter** entitled “**The use and the role of different means of translation**” an attempt has been made to display the use of special means of translation while translating specific linguistic structures of the language of G. G. Márquez. Due to the use of these means,

the Armenian texts have become more concrete, it has become possible to describe some specific situations not existing in the Armenian reality.

**In the conclusions** the main findings and the results drawn from the research are summarized.